

**ՀՈԼՈՎՄԱՆ ՈՒ ԽՈՆԱՐՀՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱՅԲԵՆՈՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԼԵԶՎՈՒՄ**

ԳԵՎՈՐԴ ԲԱՂԴԻՇՅԱՆ

V—XI դդ. մեզ ավանդված գրականության լեզուն հին գրական հայերենն է՝ գրաբարը¹։ Սակայն, զարգացման ներքին ու արտաքին գործոններով պայմանավորված, գրաբարն այդ բավական ընդարձակ ժամանակահատվածում լեզվական-որակական առումով միաձուլվ ու միատարր չէր։ Հիշյալ դարերի գրական լեզուն, ընդհանուր առմամբ գրաբարը լինելով հանդերձ, յուրաքանչյուր դարում փոփոխման, զարգացման նոր երանգներ է ստացել։ Աստիճանաբար կրած փոփոխություններն արդեն մոտավորապես XII դ. հանգեցնում են լեզվական-որակական մի նոր աստիճանի՝ միջին գրական հայերենի։

Սեբեոսը եռդասական շրջանի մատենագիր է։ Նրա լեզուն էլ, բնականաբար, հին գրական հայերենն է, որը շատ ընդհանրություններ ունի դասական հայերենի հետ։ Հետևաբար, մասամբ իրավացի է Դ. Զարբանալյանը, երբ գրում է. «Սեբեոսի լեզուն մերձավոր է մեր մատենագրության ոսկի դարուն հեղինակաց»²։ Սակայն ընդգծված արտահայտությունը քիչ բան կարող է ասել այդ մերձավորության աստիճանի ու չափի մասին։ Մեկ հոգվածի սահմաններում հնարավորություն չունենալով գաղափար տալու Սեբեոսի լեզվի բոլոր կողմերի մասին՝ սահմանափակվենք՝ հոլովման ու խոնարհման համակարգերի, ինչպես նաև մի երկու այլ առանձնահատկությունների բնությամբ։

1. Հոլովման առանձնահատկություններ։ Հայտնի է, որ հունական —աα, —ոս հնչյունական կապակցություններով հատուկ անձնանունները կարող են հոլովվել արտաքին թեքման կ'ա, կ'ի հոլովումներով։ Ուշագրավ է, որ Սեբեոսի լեզվում նշված հնչյունական կապակցություններով վերջացող բառերի շուրջ 90 տոկոսը հոլովվում է արտաքին թեքման ի հոլովմամբ։ Սա նշանակում է, որ Սեբեոսի լեզվում ևս նկատվում է ի հոլովման ավելի կենսունակություն ձեռք բերելու և այլ բառեր իրեն ձգելու միտում։

Եեղումներ արտաքին թեքման Ա հոլովման մեջ։ Հռիփսիմէ բառը —է-ով վերջացող մի շարք հատուկ անունների պես (Դայիանէ, Հեղինէ) դասական գրաբարում սեռական հոլովով լինում է Հռիփսիմեայ։ Սեբեոսը, սակայն, ունի կ' Հռիփսիմեայ, կ' Հռիփսիմէի (յուրաքանչյուրը՝ մեկական անգամ)։ Օրինակ՝ «Քակեաց կաթուղիկոսն Կոմիտասս զմատուռ սրբոյն Հռիփսիմեայ»

¹ Այս մասին մանրամասն տե՛ս Գ. Բ. Զահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 36—43։

² Գ. Զարբանալյան, Հայկական դպրություն (Դ—ԺԳ), Վենետիկ, 1897, էջ 440 (ընդգծումը մերն է—Գ. Բ.)։

(էջ 89)³։ «Երևեցաւ կուսական մարմին սրբոյ տիկնոջն Հռիփսիմէի» (էջ 89)։ Երկրորդ օրինակում Հռիփսիմէի թեքված ձևը շեղում է։

Դասական գրարարի հայտնի մատենագիրներից (Եղնիկ, Կորյուն, Խո-րենացի, Բուզանդ, Եղիշե և քիչ ուշ շրջանից՝ Փարպեցի) միայն Ագաթանգեղոսի Պատմության մեջ Հռիփսիմէ հատուկ անձնանունն ունենք թեքված ձևով, բայց միշտ՝ Հռիփսիմեայ ձևով։ Օրինակ՝ «Ետես թագաւորն զգեղապանժ վայելչութիւն... նկարագրին Հռիփսիմեայ»⁴։

Կեսարիա՝ իսկ հիմքով այս բառի սեռական հոլովը լինում է Կեսարիայ և Կեսարեայ։ Հետագա դարերում հանդիպում է նաև Կեսարիոյ⁵։ Սերբոսն ունի թեքված ու հոլովիչով։ Օրինակ՝ «Սուրբ Ղևոնդ մեծ արքեպիսկոպոսն Կեսարու, ուր սնեալ և ուսեալ էր սուրբ Գրիգորիոս» (էջ 129)։ «Ամենեքեան ղնիկիայն խաւեցան... և Բարսեղ Կեսարու եպիսկոպոս» (էջ 13)։

Ունենք նաև Նէոկեսարիա, որի սեռականը Նէոկեսարիայ /Նէոկեսա-րիայ/ Նէոկեսարիոյ լինելու փոխարեն Սերբոսը գործածել է Նէոկեսարու (էջ 131) ձևը։

Աղեքսանդրիա բառը Սերբոսի Պատմության մեջ թեքված է ու և ի հո-լովիչներով։ «Յայնժամ ապստամբեալ ի բաց եկաց ի Փոկասայ Երակլէս զարաւար զարու իւրով, որ էր ի կողմանս Աղեքսանդրի» (էջ 72)։ «Ե՛հարց, եթէ ռ՞ջք էին զլխաւորք»։ և.... ասացին. եթէ.... յնփեսոս՝ Կիրեղ Աղեք-սանդու եպիսկոպոս» (էջ 124)։

Շեղումներ Ի-Ա իսաւր հոլովման մեջ։ Երթեկ բառի եզակի գործիա-կանը երթեկաւ է, բայց Սերբոսը գործածել է երթեկով՝ «Ի բաց կացին ի ծառայութենէ նոցա և հապճեպ երթեկով հնազանդեցան ի ծառայութիւն թագաւորին Յունաց» (էջ 155)։

Պալատ բառը Սերբոսի Պատմության մեջ թեքվել է ու հոլովիչով։ Օրի-նակ՝ «Յանձնեալ ամենայն մեծամեծացն պալատոյն՝ հաստատեաց զնա յա-թոռ թագաւորութեան իւրոյ» (էջ 81)։ «Լուեալ պաղատանաց կնոջն և ամե-նայն պաղատոյն՝ հրամայեաց առնել ի վերայ նորա տղորմութիւն» (էջ 57)։

Ի դեպ, դասական գրաբարն այս բառն ունի նաև պալատն ձևով, որի եզակի սեռական-տրականը լինում է պալատան կամ պալատին, իսկ հոգնա-կին՝ պալատանց։

Շեղումներ Ո հոլովման մեջ։ Ախոռ գոյականի եզակի բացառական հո-լովը յախոռոյ է, բայց պատմիչը գործածել է՝ յախոռէ։ Օրինակ՝ «Հրամայէ

³ Բնագրային օրինակները վերցնում ենք Սերբոսի Պատմության հետևյալ հրատարակու-թյունից՝ «Սերբոսի եպիսկոպոսի Պատմութիւն», չորրորդ տպագրութիւն, բաղդատութեամբ ձե-ռագրաց, հանդերձ առաջաբանիւ և ծանոթութեամբք ի ձեռն Ստ. Մալխասեանց, Երևան, 1939։

⁴ Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909, էջ 79։

⁵ Կեսարիա, Նէոկեսարիա, Աղեքսանդրիա բառերի սերբոսյան վկայություններում շեղում ենք դիտում այնքանով, որ դրանք ուշ շրջանում հոլովվել են նաև ու հոլովիչով, իսկ Սերբոսն այդ բառերից Կեսարիա-ն և Նէոկեսարիա-ն հոլովել է միայն ու հոլովիչով, իսկ Աղեքսանդրիա-ն՝ և՛ ու, և՛ ի հոլովիչներով։

⁶ Գ. Զ ա հ ու կ յ ա ն, Հին հայերենի հոլովման սխտեմը և նրա ծագումը, Երևան, 1959, էջ 97, ուր հեղինակը գրում է. «-իա-ով վերջացող աշխարհագրական հատուկ անուններն ուշ շրջա-նում սեռական-տրական-բացառականում ունենում են և -իոյ-ով ձևերը (ընդգծումը հեղինա-կինն է)»։

նժոյգ տանել ընդ առաջ նորա յախուէ արքունի արքունական կազմուածով» (էջ 69)։

Ողոմ բառի եզակի գործիականը ողոմով-ի փոխարեն ողոմալ է։ Օրինակ՝ «Եւ ժողովեալ համարակարին զամենայն իշխանս և զզարս Հայոց որ ի Պարսից կողմանէ ողոմալ և քաղցր բանիւք յորդորեալ զամենայն միաբանեալ» (էջ 59)։

Պարապ բառի եզակի գործիականը լինելու էր պարապով։ Հայկազյան բառարանագիրները այս բառի եզակի գործիականը (պարապով ձևով) գնում են նաև որպես մակբայ։ Օրինակ՝ «Խնդրէր՝ թէ ղիարգ պարապով մատնեսցէ զնա»⁷։ Սեբեոսը գործածել է պարապալ։ Օրինակ՝ «Ասէ. «Երթայց նախ առաջին զնա վանեցից և ապա պարապալ դարձեալ գնացից ի Հայս» (էջ 26)։

Շեղումներ Ու հոլովման մեջ։ Սպաս-ի հոգնակի գործիականն է սպասուի։ Բայց պատմիչը գործածել է սպասիւի։ Օրինակ՝ «Ընդ նոսին ըմբռնեալ և երանելի ծերունի կաթողիկոսն Յովհանն ի գերութիւն վարեցաւ հանդերձ ամենայն սպասիւի եկեղեցւոյն» (էջ 78)։ Ի դեպ, Սեբեոսն ունի նաև սպասուի։ Ղ. Փարպեցի⁸ և Եղիշեն⁹ ունեն սպասուի։

Ուրբաք-ը հոլովվում է ու հոլովիչով, որի ներգոյականը պիտի լիներ յուրբաքու։ Դասական մատենագիրների (նաև Ղ. Փարպեցու) և Աստվածաշնչի առկա համաբարբառները¹⁰ նշված բառի ներգոյականը չեն տալիս, իսկ ՆՀԲ-ում ունենք յուրբաքու ձևը։ Օրինակ՝ «Ի կիրակէի և ի չորեքշաբթու և յուրբաքու»¹¹։ Սեբեոսն ունի յուրբաքի։ Օրինակ՝ «Աւր ի էր տրէ ամսոյն, յաւուր ուրբաքի» (էջ 118)։

Տիրասպան բառի եզակի սեռական-տրականը տիրասպանի ձևն է, իսկ հոգնակին՝ տիրասպանից կամ տիրասպանաց։ Հոգնակի ուղղականի կամ հայցականի համար բառարանները ոչինչ չեն նշում, բայց որպես համանիշ ղևում են տիրասպանու։ Վերջինիս համար ևս հոգնակի ուղղականի վերաբերյալ ոչ մի նշում չկա։ Սակայն, տիրասպան բառի հոգնակի ուղղականը լինելու է տիրասպանք, որից էլ հոգնակի հայցականը՝ տիրասպանս, իսկ տիրասպանու բառինը՝ համապատասխանաբար՝ տիրասպանուի-տիրասպանուս։ Սեբեոսը տիրասպան բառի հոգնակի հայցականը կազմել է տիրասպանունս ձևով։ Օրինակ՝ «Արդ զի զհակառակորդսն մեր սիրելիս արար և ետ զմեզ ի գթութիւն և յողորմութիւն առաջի ամենայն գերշաց մերոց, որ զտիրասպանունս և զհրեայս, որք կարծէին շարշարանաւ սորա դարձեալ թշնամանել զայն» (էջ 84)։

Խաբխիս բառը հոլովվում է -ի, -աց կամ -ից ձևով։ Սեբեոսի Պատմութեան մեջ գործածված է խաբխիսով։ Օրինակ՝ «Եւ գտեալ զտեղին, որ կոչի սրբութիւն սրբութեանց՝ շինեցին զնա խաբխիսով շինուածով տեղի աղաւթից իւրեանց» (էջ 111)։

⁷ ՆՀԲ, Բ, 623.

⁸ «Հազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան», Տփղիս, 1904, էջ 38.

⁹ Եղիշեն, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957, էջ 69.

¹⁰ «Հայկական համաբարբառ», № 1—7, Երևան, 1972—1974, Թաղևոս Աստվածատույան, Համաբարբառ Հին և նոր կտակարանաց, Երուսաղեմ, 1895.

¹¹ ՆՀԲ, Բ, 559.

Նաւ-ը հոլովվում է -ու, -ուց և -ի, -աց ձևով: Բայց Սեբեոսն ունի ո հոլովիչով թեքված՝ նաւով: Օրինակ՝ «Եկին հասին.... նաւք.... հանդերձ ամենայն փոքր նաւովն և ամենայն կազմուածովքն իւրեանց» (էջ 148):

Քաղեայ-ն հոլովվում է -էի, -եայց ձևով, իսկ ՆՀԲ-ն նշում է -եայց, -էից: Սեբեոսը հոլովում է քաղեաց. «Ես ճառեցից.... զարանց քաղեաց և զարանց հսկայազանց» (էջ 38):

Եթե հենվենք «Առձեռն բառարանի»¹² և ՆՀԲ-ի տվյալների վրա, ապա Սեբեոսի աշխատության մի շարք բառերում ևս կարելի է դիտել շեղում: Սակայն դասական մատենագիրների հաղորդած տվյալները թույլ չեն տալիս այդ անել: Ահա այդ բառերը.

Պանֆ—Հոգնակի զործիականը պիտի լիներ պանով: Սեբեոսն ունի պանաֆ (էջ 48):

Կորյունն ունի միայն պանաֆ¹³, իսկ Ագաթանգեղոսը՝ և՛ պանաֆ (էջ 154), և՛ պանով (էջ 449):

Գունդ—Հոլովվում է -ի, -աց կամ -ից ձևով: Ըստ մի շարք աղբյուրների, այս բառը երբ նշանակում է «զորք», «խումբ», «բազմություն», հոլովվում է -ի, -աց կամ -ից, իսկ երբ նշանակում է «գունդ», «գնդակ» և այլն՝ -ույ, -ի, -աւ ձևով:

Հր. Աճառյանը նշված համանունների համար տալիս է հոլովման նույն տիպերը՝ ի, ի—ա¹⁴: Նույն կերպ է վարվում նաև Գ. Ջահուկյանը¹⁵, Բայց Սեբեոսի երկում «զորք» իմաստով գունդ բառը հոլովվել է ո հոլովիչով: Օրինակ՝ «Եւ այսոքիկ են նախարարք և զարք որ զնացին միաբանութեամբ հանդերձ իւրաքանչիւր զնդով և դրաւու ի դուռն թագաւորին Պարսից խոսրովու» (էջ 56): Ավելին, Կորյունից կարելի է բերել նախադասություններ, որոնցում «խումբ» իմաստով գունդ բառը գործածվել է և՛ զնդով, և՛ զնդիւ ձևերով: Օրինակ՝ «Յառաջադէմն Պաւղոս. բովանդակ առաքելական զնդովն... եկեալ հասեալ» (էջ 56): «Զոր առեալ Վահանայ և Հմայեկի.... ամենայն լուսաճաճանչ զնդիւն.... յԱւշականն ելանէին» (էջ 94):

Ման—ԱԲ-ն հոգնակի ուղղականի համար նշում է -ուանֆ և -ուեֆ¹⁶, իսկ ՆՀԲ-ն՝ միայն -ուեֆ¹⁷:

Սեբեոսը մանֆ իբրև հոգնակի ուղղական չի տալիս, բայց ունի նրանից կազմված՝ մանս (հոգնակի հայցականը): Օրինակ՝ «Թող զի փոքր մի հանգեայց և ոչ իսկ տեսից զմանս ձեր» (էջ 53):

Եզնիկն ունի մանֆ¹⁸, զմանս (էջ 10), մանուանֆ (էջ 156), իսկ Խորենացին մանուանֆ¹⁹, մանֆ (էջ 316):

Կող—Նշված բառարանները հոգնակի ուղղականի համար տալիս են կողուեֆ, բայց Սեբեոսն ունի կողֆ, որից էլ՝ կողս: Այսպես՝ «Եւ կողֆ երեք ի բերան ունեւով» (էջ 114): «Զգաճս թագաւորութեանս իմոյ ընդ կողս դոցա

¹² Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865 (այսուհետև՝ ԱԲ):

¹³ Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941, էջ 90:

¹⁴ Հր. Աճառյան, Հայերեն արամեական բառարան, հ. 1, Երևան, 1971, էջ 593—595:

¹⁵ Գ. Ջահուկյան, Նշվ. աշխ., էջ 336:

¹⁶ ԱԲ, էջ 535:

¹⁷ ՆՀԲ, Բ, 195:

¹⁸ Եզնիկայ Կողբացոյ Բագրևանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826, էջ 90:

¹⁹ Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Տիֆլիս, 1913, էջ 121:

այսրեն արտաքս քարշեցից՝ հանդերձ նոցունց աղխեալ գանձիւքս (էջ 12)։ Ագաթանդեղոսի լեզվում գտնում ենք զկուլս ձևը (էջ 65)։

Պատիւ—Հոգնակի գործիականը պատուով՝ ձևով գործածելու փոխարեն Սեբեոսն ունի պատուաւք. «Մեծացուցանէ ահագին պատուաւք ի ճամբար ականակապ և ի գումարտակ, և ի գահս արծաթի» (էջ 66)։

Ղ. Փարպեցին ունի և՛ պատուաւք (էջ 54), և՛ պատուովք (էջ 24, 116, 140), իսկ Եղիշեի քննական բնագրի մեջ պատուովք է (էջ 12)։

Բառերի կրկին հնչուման փաստեր—Այսպիսի բառերի թիվն այնքան էլ մեծ չէ հայերենում և մասնավորապես՝ Սեբեոսի լեզվում։ Այն դեպքում, երբ բառի թեթևած ձևն այլևս չի գիտակցվում իբրև այդպիսին, երբեմն այն կարող է կրկին հնչվել։ Դեռևս Ա. Բագրատունին իր քերականության մեջ բերում է կրկին հնչված բնթարկված մի քանի բառեր²⁰։ Յավոք, Բագրատունին բնագրային վկայություններ չի բերում, որպեսզի հնարավոր լինի ստուգել, թե այդ փաստերը ո՞ր դարից են գալիս, ո՞ր հեղինակին են և ո՞րն է դրանցից նախնականը, որով ավելի ճիշտ կարժեքավորվեր նաև Սեբեոսի հետևյալ վկայությունը. «Խնքն հեծեալ յերիւար երիւք արամբք, որոց էին անուանք այսոքիկ՝ Սարգիս Դիմաքսեան և Սարգիս Տրպատունի և ոմն ի ղինակրացն զեղջու հեծեալ անուն Սմբատիկ» (էջ 67)։ Պատմիչի լեզվում կրկին հնչված է ենթարկված նաև զետեզր բառը։ Օրինակ՝ «Թողեալ զբանակս իւրեանց ի զետեզերին և հետիոտս գնացին ի վերայ բանակի նոցա» (էջ 107)։

Գետեզր—ի կողքին զետեզեր թեթևած ձևն, իր հերթին, հետագա դարերում որպես ուղիղ ձև ըմբռնելը հանգեցնում է դրանց իբրև անկախ բառերի ճանաչման։ Ժամանակակից գրական արևելահայերենում այսօր ունենք զետեզր, գետեզերք, գետեզերյալ²¹։

Սեբեոսը մի երկու վկայություն ունի նաև ծովեզր բառի համար, որի ուղևորման հայցականը ի ծովեզր լինելու փոխարեն, վկայել է ի ծովեզեր. «Գնաց ի ծովեզերն և հանդիպեալ նաւի միոջ՝ ասէ նաւորդացն» (էջ 70)։ «Ոչ ուրեք կարաց զետեղել, այլ գնացին փախստական մինչև մերձ ի ծովեզերն» (էջ 146)։

Մեր կարծիքով՝ Սեբեոսի Պատմության մեջ կրկին հնչված է ենթարկված նաև պաղատ բառը։ Այսպես՝ «Եւ ինքեանք մեծաւ յաղթութեամբ հրեշտակ աւետարտ կայսերն և ամենայն պաղատային փութանակի առաքէին» (էջ 54)։ Այստեղ, իհարկե, պաղատ բառով պատմիչը նկատի ունի պաղատականներին։

Ուշագրավ գործածություն ունի և Ումիզղ բառը, որի սեռականը Սեբեոսը տալիս է նաև Ումիզղայի ձևով (էջ 24)։

Շեղումներ հնչումների կազմության և հնչվական համաձայնության մեջ։ Տեղ. ժամանակ նշող և ո հնչումնով հնչվող —ի վերջահանգով մի շարք բառեր եզակի տրականում ստանում են —ջ հնչվակերտը։ Հենց այդ տրականից էլ, սովորաբար, կազմվում է եզակի ներգոյական հնչվող։ Այս կապակցությամբ Գ. Զահուկյանը գրում է. «Եզակի թվում ներգոյականը ա) նման է լինում տրականին այն բոլոր դեպքերում, երբ տրականը տարբերվում է

²⁰ Ա. Բագրատունի, Հայերեն քերականություն ի պետս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 45։

²¹ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. Ա, Երևան, 1969, էջ 387։

սևռականից՝ ի միում, յառաջնում, ի հնում, այլև՝ ի տեղում, ի տալում, ի կղզում և այլն»²², ներգոյականի համար, սակայն, Սեբեոսի Պատմությունն ունի այսպիսի փաստեր. «Զամենայն զպատանդսն.... սատակեցին.... որք ոչ դիպեցան ի տեղում, այն միայն ապրեցան» (էջ 155)՝ փոխանակ՝ ի տեղում յայնմիկ: «Եւ հրաման տուեալ թագաւորն խնդիր առնել ի գանձու տեղում, և դտին դրեալ գնիկիայն հաւատս ճշմարիտս» (էջ 125)՝ փոխանակ՝ ի տեղում:

Պատմիչի լեզվում բավական տարածված երևույթ է մի շարք բառերի ներգոյականի իմաստը ի+տրականով արտահայտելու փոխարեն ի+հայցականով արտահայտելու: Օրինակ՝ «Թողին ի բաց զքաղաքն խաղաղութեամբ՝ փակեցին զդուռն և ամրացան ի նա» (էջ 105): «Նստէր ի Բահլ Շահաստանի յերկիրն Քուշանաց» (էջ 13): «Լինի անդ կոտորած մեծ մինչև ի նեղ անկանել զարուն Պարսից յերկիրն Ուհայու» (էջ 16): «Կազմեալ ունէր յեզր ծովուն նաւս բազումս թեթևս» (էջ 14):

Սեբեոսի լեզուն բավական անկայուն է դերանվան և գոյականի հոլովման համաձայնության հարցում: Օրինակ՝ «Հրաման ետ զաւրավարի իւրոյ Շահր Վարազայ» (էջ 93)՝ փոխանակ՝ զաւրավարի իւրում: «Ահաւասիկ տեսան ածեալ ի պանդոկի յայդ» (էջ 88): Դասական հայերենում նշված դերանունը այդ դիրքով հոլովվում էր երկար ձևով և համաձայնվում նախադաս գոյականի հետ: Հետևաբար, պետք է լիներ՝ ի պանդոկի յայդմիկ:

Մի քանի ուշագրավ կողմեր թվականների հոլովման մեջ: Սեբեոսի լեզվում տառով վրամ տառակապակցությամբ արտահայտված քանակական թվականները երբեք չեն հոլովվում, բացառությամբ մի դեպքի. «Շահէնն Լիւ-աւ (այսինքն՝ երեսուն հազարաւ—Գ. Բ.) հասեալ բնակեցաւ ի Տիգրանակերտ աւանի» (էջ 93):

Ի հակադրություն քանակականների, տառով և առաջադասությամբ արտահայտված դասական թվականը հոլովվում է: Օրինակ՝ «Յամին ՄԲ-երուդի Շապուհ արքային Պարսից, է-երուդի ամի բարեպաշտին Կոստանդիանոսի կայսեր թագաւորէ հոսորով» (էջ 18):

Հարադրավոր բաղադրյալ թվականի դասականակերտ ածանց շտաղած բաղադրիչը միշտ մնում է չհոլովված: Օրինակ՝ «Թագաւորէ Արշակն փոքր կոչեցեալ քան և իններորդի թագաւորութեանն Արշակայ հաւր իւրոյ» (էջ 19): «Յամին հաւրիւ և տասներորդի չորրորդի Արշակայ արքայի Պարթևաց.... զարածողով լեալ» (էջ 8):

Եթե նախադասությունն սկսվում է թվական ունեցող երկու ժավալուն ժամանակի պարագաներով, առաջինում դասական թվականը հոլովվում է, իսկ երկրորդում՝ ոչ (չնչին բացառությամբ): Օրինակ՝ «Յամի ԽԴ-երուդի երանելոյն Երակղի կայսեր, երկրորդ ամի Յազկերտի Պարսից արքայ միաբանեալ Հրէից ընդ Իսմայելացիսն» (էջ 22): «Յամին Լ-երուդի չորրորդի մեծին հոսորովայ, և չորրորդ ամի արքային Պարսից Արտաշրի թագաւորէ Տերենտիանոս» (էջ 14):

Հետաքրքիր է նշել, որ երբ հարադրությամբ արտահայտված բաղադրյալ դասական թվականի բոլոր բաղադրիչները դասականակերտ ածանցներ են ստացել, ապա դրանք բոլորն էլ հոլովվել են: Օրինակ՝ «Յամին քաներուդի

²² Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 91 (ընդգծումները հեղինակինն են):

առաջնեւորդի արքային խոսրովայ հրաման ետ նմա» (էջ 78): «Եղև ի ժամանակին յայնմիկ գումարել զարս Երակլի.... յամի քաւնեւորդի երկրորդի թագաւորութեանն խոսրովայ» (էջ 79):

Ուշադրութեան արժանի է նաև Սեբեոսի լեզվում օգտագործվող հոլովման զուգաձևությունը: Դեռևս դասական գրաբարում գոյություն ունեին բազմաթիվ բառեր, որոնք հոլովվում էին մի քանի տիպերով: Կան նաև դեպքեր, երբ նույն հոլովում միևնույն բառը հանդես էր գալիս մեկից ավելի հոլովաձևերով: Նշանակում է դասական գրաբարի բառային առանձին միավորներ դեռևս որոշակիորեն չէին խմբավորվել ըստ հոլովատիպերի, իսկ հոլովաձևվերից մեկը գործածությունից դուրս չէր մղել մյուսին: Այդպիսի մի շարք բառեր²³ տեղ են գտել նաև Սեբեոսի Պատմության մեջ: Նկատենք, սակայն, որ ուսումնասիրվող երկում չկա մի բառ, որի հոլովական անկայունությունը նախկինում իբրև աղպիսին գոյություն ունեցած չլիներ:

Սեբեոսի լեզվում որոշ հոլովաձևերի կիրառության առավել հաճախակիությունը վկայում է VII դ. դրանց մի մասի կենսունակությունը:

Պատմիչը որոշ զույգ հոլովաձևեր գործածել է հավասար քանակով: Օրինակ, դրաւ թառի տրականը գործածել է թե՛ դրաւոց, թե՛ դրաւից (յուրաքանչյուրը՝ մեկական անգամ)՝ «Եւ զզարս աշխարհին հայոց ընդունէին գումարել որք ի ժամուն առ ձեռն գտեալ.... ըստ զնդից՝ ըստ դրաւոց իւրեանց» (էջ 38): «Տայր նմա զարս կայսերական յաւանականութիւն... ըստ դրաւից իւրեանց» (էջ 37): Հաճախ նա մի հոլովաձևում գործածում է միայն նույն հոլովիչով թեքված ձևը, իսկ մյուս բոլոր հոլովներում՝ այլ հոլովիչով հոլովվածները: Այսպես, զանձ բառը հոլովվում է և՛ ու, և՛ ի հոլովիչով: Սեբեոսը հոգնակի գործիականում միշտ գործածել է զանձիւ (էջ 42, 97), իսկ մնացած բոլոր հոլովներում՝ ու հոլովիչով հոլովված ձևերը (էջ 50):

Երբեմն նո՛ւյն հոլովի եզակիում նո՛ւյն բառը գործածված ենք գտնում մի՛ հոլովիչով, հոգնակիում՝ մի այլ: Օրինակ՝ «Թափեցին զմաշկապերճանն ամենայն, դեսպակն ոսկեղէն բազմաքանքար, որ ակամբք պատուականաւ մարգարտաւ յօրինեալ» (էջ 28): «Զամենայն անաթս մատուռակացն առաքէ նմա ոսկի, հանդերձս թագաւորականս, արտախորակս ոսկեզաւծս, և զանգապանակ ակամբք և մարգարտով կարգեալ» (էջ 64):

Գրաբարում կան դեպքեր, երբ բառը հոգնակի ուղղականի համար ունի զույգ ձևեր: Օրինակ, այն ցուցական դերանվան հոգնակի ուղղականի համար դասական գրաբարն ունի այնք և այնքիկ: Այս բառը պատմիչը գործածել է միայն այնք ձևով: Օրինակ՝ «Իսկ այնք, որ էին ընդ նոսա խնդրեցին երդումն» (էջ 64):

Հետաքրքիր է նշել, որ Սեբեոսը որոշ բառերի հոգնակի ուղղականի համար գործածել է կա՛մ հոլովված միայն կարճ ձևը, կա՛մ և՛ կարճ, և՛ երկար ձևերը, իսկ հոգնակի հայցականը կազմել է այդ բառերի հոգնակի ուղղականի բացառապես երկար ձևերից: Օրինակ, այն ցուցական դերանվան հոգնակի ուղղականը գործածել է միայն մեկ անգամ, այն էլ՝ այնք վարճ ձևով (վկայությունը բերվեց քիչ վերևում), իսկ հոգնակի հայցականը՝ միայն երկար ձևով: Օրինակ՝ «Գոհանամք զաստուծոյ ի վերայ մխիթարութեանց,

²³ Դրանցից մի քանիսի մասին խոսվեց հոլովական շեղումներին վերաբերող հատվածում: Այստեղ դրանց անդրադառնում ենք անհրաժեշտությունից ելնելով:

րնդ որ մխիթարեաց զմեղ որպէս զի և դուք կարող լիջիք մխիթարել զայնոսիկ, որ յամենայն նեղութիւնս իցեն» (էջ 86): «Հարեալ զամենայն կողմանսն զայնոսիկ սրով սուսերի, առին զաւար և զգերութիւն» (էջ 118) և այլն:

Եպիսկոպոս բառը հոգնակի ուղղականում ունի և՛ եպիսկոպոս (էջ 124, 131), և՛ եպիսկոպոսուն (էջ 121, 133, 144), բայց հոգնակի հայցականը կազմել է միայն երկար ձևից: Օրինակ՝ «Եւ ժողովեալ ամենայն եպիսկոպոսունս և իշխանս արարին քննութիւն» (էջ 98): «Ժողով արար դա, և զամենայն եպիսկոպոսունս այսր ժողովեաց» (էջ 145):

Բացի վերոհիշյալ բառերից բերենք նաև մի քանի այլ օրինակներ: Հատուկ անձնանուններ և տեղանուններ—Սեբեոսը եզակի սեռական հոլովում Աղեփսանդր բառը գործածել է Աղեփսանդրու /-ի, Երակլոս-ը՝ Երակլի /-եայ (բայց ավելի շատ՝ Երակլի), Խոսրով-ը՝ Խոսրովայ /-ու (ավելի շատ՝ Խոսրովայ, իսկ տրականում՝ Խոսրովու), Կոստուս-ը՝ Կոստասայ /-ու /-ի (յուրաքանչյուրը՝ մեկական անգամ), Հայկ-ը՝ Հայկայ /-ի (ավելի շատ՝ Հայկայ), Հովփսիմէ-ն՝ Հովփսիմեայ /-ի (մեկական անգամ), Վրկան-ը՝ Վրկանայ /-ի (մեկական անգամ) և այլն: Բերենք օրինակներ նշված բառերից մի քանիսի համար միայն. «Յայնժամ ապստամբեալ ի բաց եկաց ի Փոկասայ Երակլէս զարավար զարու իւրով, որ էր ի կողմանս Աղեփսանդրի» (էջ 72): «Եճարց, եթէ «ո՞րք էին զխաւորք». և.... ասացին. եթէ.... յԺիսոսս՝ Կիրեղ Աղեփսանդրու եպիսկոպոսն» (էջ 124): «Եւ եղև ի մահուանն Երակլի Թագաւորեաց Կոստանդին որդի նորա» (էջ 113): «Եւ Թագաւորէ Երակլոս, որդի Երակլեայ» (էջ 113): «Քրակեաց կաթողիկոսն Կոմիտաս զմատուռն սրբոյն Հովփսիմեայ» (էջ 89): «Երևեցաւ կուսական մարմին սրբոյ տիկնոջն Հովփսիմէի» (էջ 89):

Հասարակ գոյականներ—Սեբեոսը եզակի սեռական հոլովում խորհուրդ բառը գործածել է խորհրդեան /-ի /-ույ (ավելի շատ՝ խորհրդեան), մահ-ը՝ մահուան /-ու:

Եզակի գործիական հոլովում գետ գոյականը գործածել է գետով /-աւ, գունդ-ը՝ գնդով /-աւ (մեկական անգամ), հուր-ը՝ հրով / հուրք (յուրաքանչյուրը՝ 3-ական անգամ): Օրինակ՝ «Անց զգետովն առ ի ըմբռնել զԽոսրով» (էջ 36): «Անց զգետովն առ Վարդանակերտաւն աւանաւ» (էջ 94): «Զբազումս վանեցին հրով» (էջ 120): «Այրեցին զքաղաքն հուրք» (էջ 83):

Կին բառը նույն հոլովում գրաբարն ավանդել է կնաւ և կանամբ: Սեբեոսն ունի միայն կնաւ ձևը (4 անգամ):

Հոգնակի ուղղականում եպիսկոպոս բառը հեղինակը գործածել է եպիսկոպոս և եպիսկոպոսուն (առաջինը՝ 2 անգամ, երկրորդը՝ 10): Օրինակ՝ «Ժողովեցան ամենայն եպիսկոպոսունք» (էջ 121): «Դիպեցան անդ արք երկու եպիսկոպոսք յաշխարհէն Հայոց» (էջ 124):

Հոգնակի բացառական հոլովում երէց գոյականը գործածվել է յերիցունց /-անց (ավելի շատ՝ յերիցանց):

Դերանուններ—Այս, այդ, այն դերանունների եզակի սեռականը գրաբարում կազմվում է և՛ կարճ, և՛ երկար ձևով (համապատասխանաբար՝ այսր-այսորիկ, այդր-այդորիկ, այնր-այնորիկ): Դասական հայերենում կարելի է հանդիպել երկու ձևերն էլ համատեղ օգտագործված: Ընդհանուր առմամբ՝ ավելի գործածական են երկար ձևերը: Մեր ուսումնասիրած հեղինակներից բացառություն են Ագաթանգեղոսը և Մ. Խորենացին, որոնք այդ ցուցական դերանվան այդր ձևն ավելի շատ են գործածել, քան այդորիկ-ը:

Սեբեոսի լեզվում նույնպես առկա է ցուցական դերանունների երկար ձևերի ավելի հաճախակի կիրառությունը: Ավելին, Սեբեոսի Պատմության մեջ որոշակի հակում վա այս դերանունների սոսկ երկար ձևերի գործածության: Այսպես՝ պատմիչն այնտեղիկ-ը գործածել է 36 անգամ, իսկ այնր-ը՝ 1, այստեղիկ-ը՝ 16, այսր-ը՝ 1, այդտեղիկ-ը՝ 1, այդր-ը՝ ոչ մի անգամ:

Պատմիչի լեզվում այս, այդ, այն դերանունները երկար ձևով հոլովվելիս հետադաս են թե՛ նախադրությանը, թե՛ գոյականին և միշտ հոլովով ու թվով համաձայնեցված գոյականի հետ: Այս դերանունների համար հետադաս կիրառությամբ՝ կարճ կամ նախադաս գործածությամբ՝ երկար ձևերի վկայություն չունի Սեբեոսը:

2. Խոնարհման առանձնահատկություններ: Հոլովման համակարգի համեմատությամբ Սեբեոսի լեզուն ավելի հարազատորեն է պահպանել դասական գրաբարի բայաժամանակների ու բայաձևերի կազմությունը, բայական ժամանակների բո՛ւն և երկրորդական կիրառությունները:

Սեբեոսի Պատմության մեջ առկա են դասական գրաբարի բոլոր լծորդությունների բայերը: Սակայն ամենից գերակշռողը ե խոնարհման բայերն են (մոտ 400):

Ե, ի խոնարհումներում մեծ թիվ են կազմում պարզ բայերը, Կ խոնարհման մեջ՝ ածանցավորները, իսկ ռ խոնարհման մեջ բայերի կեսն ածանցավոր է, կեսը՝ պարզ:

Հակառակ ե և ի խոնարհման պարզ բայերի, նույն խոնարհումների ածանցավոր բայերն առհասարակ իրենց անցյալ դերբայը կազմում են Վատարյալի հիմքից (չ, նչ ածանց ունեցողները՝ պատճառականի կատարյալի հիմքից):

Վերևում ասվածի համաձայն, անդրանկանամ բայի անցյալ դերբայն օրինաչափորեն լինելու էր անդրանկացեալ: Օրինակ՝ «Արամենակ անդրանկացեալ (անդրանիկն Հայկայ)»²⁴: Պատմիչի լեզվում, սակայն, գտնում ենք մի վկայություն, ուր նշված բայի անցյալ դերբայը կազմված է ներկայի հիմքից. «Արդ՝ այս են անուանք ազգածինն արանց, անդրանկելոցն ի Բաբելոն» (էջ 3): Հետևյալ նախադասության մեջ. «Քանզի նա է խաղաղութիւն մեր որ առնէ զամենայն, որպէս ասացեալդ է, և վերստին նորոգէ որպէս այժմիկ մարտեալ՝ ուրախ արասցէ զմեզ ի ձեռն սուրբ աղաթից ձերոց» (էջ 84): Մարտեալ-ը ձևով անցյալ դերբայ է, բայց ոչ մարտնչիմ բայինը, որովհետև իմաստով չի կապվում նախադասության էություն հետ, իսկ մարտեմ բայ գրաբարը չունի: Ստ. Մալխասյանը ենթադրում է, որ այս բառը աղավաղված է²⁵:

Սեբեոսի լեզվում խոնարհված բայերի առանձին ձևերում առկա են հետևյալ շեղումները:

Կարեմ-կարացալ²⁶ (փոխանակ՝ կարաց): Օրինակ՝ «Եւ այնչափ սաստիկ լինէր կոտորածն, մինչև զի խաղացեալ վտակաց սաստկութիւն արեանցն

²⁴ ՆՀԲ, Ա, 136:

²⁵ «Սեբեոսի եպիսկոպոսի Պատմություն», էջ 35, տողատակ, 19:

²⁶ Մ. Գրիգորյանն այս բառը սրբագրում է՝ կարացեալ («Գիտողություններ և սրբագրություններ Սեբեոսի պատմագրոց բնագրին վերա», Վիեննա, 1973, էջ 30):

առողջանէր զերկիրն ամենայն: Եւ ոչ կարացաւ զդեմ՝ ունել, փախստական լինէր զարն ապստամբական առաջի զարացն Յունաց» (էջ 40):

Տեսանեմ-տեսան (փոխանակ՝ տեսին): Օրինակ՝ «Որ ահաւասիկ տեսան ածեալ ի պանդոկի յայդ և դարմանել և զերիս դահեկանս, որ ետ ի պանդոկապետն՝ ահաւասիկ դու ունիս ի ձեռս քոյ դարման առատ» (էջ 88): Ընդգծված բայը կրավորական չէ, որովհետեւ շատերը ոչ թե տեսնվում են, այլ շատերը տեսնում են ավազակների կողմից կողոպտված, պանդոկում կիսամեռ ընկած անցորդին:

Ժողովեմ-ժողովէ՛, հրամայեմ-հրամայէ՛ (փոխանակ՝ ժողովեա՛, հրամայեա՛): Օրինակ՝ «Բայց ե՛կ, ասէ, ես զիմս ժողովեմ և ի Թրակէ գումարեմ. և դու ղքոյդ ժողովէ՛ և հրամայէ՛ յարեելս տանել» (էջ 49):

Տանիմ-տարցեն (փոխանակ՝ տարցին), ունիմ-կալցեն (փոխանակ՝ կալցին): Օրինակ՝ «Կալցեն զնա և տարցեն յանդիման նորա ի սենեակն» (էջ 145): «Վահան իշխան աշխարհին Սիւնեաց.... խնդրեաց ի նոսրովայ յարքայէ Պարսից. զի տարցեն զդիւան աշխարհին Սիւնեաց ի Փայտակարան քաղաք» (էջ 27):

Դասական գրաբարում բայի անցյալ անկատար ժամանակը ներգործական և կրավորական սեռերի արտահայտման առանձին ձևեր չունի: Մտենադրության մեջ ե խոնարհման բայերի անցյալ անկատարի եզակի Յ-րդ դեմքը հազվադեպ հանդիպում է -իւր վերջավորությամբ -էր-ի փոխարեն և լինում է միշտ կրավորական սեռի իմաստով: Օրինակ՝ Բուզանդարանում կարդում ենք. «Որոյ անուն Փիսակ կոչիւր» (էջ 76): Այս երևույթը վաղուց ի վեր նկատված է լեզվաբանների կողմից²⁷: Չնայած սեռատարբերակման խիստ անհրաժեշտությանը, իւր-ով հնաոճ ձևերը գրաբարում տարածում չստացան: Սկսանիմ-ը, սակայն, որ ե խոնարհման բայ չէ, Սեբեոսի լեզվում նշված ժամանակում և դեմքում նույնպես ստացել է -իւր փոխանակ՝ -էր-ի: Օրինակ՝ «Անտեսանելին տեսանիւր, անշաւջափելին շաւջափիւր, անժամանակն սկսանիւր» (էջ 12): Այստեղ սկսանիմ-ը նույն նախադասության մեջ գործածված տեսանիւր, շաւջափիւր ձևերի նմանակությամբ ստացել է -իւր:

Ուսումնասիրվող հեղինակի երկում առկա բայական շեղումները վերաբերում են ոչ թե խոնարհման տիպերին, այլ խոնարհման հարացույցի այս կամ այն անդամին: Սակայն իբրև շեղում նկատված այս ձևերում էականն այն է, որ գոնե բերված բայերի համար ունենք բայասեռային տարբերակման դասական հայերենին հատուկ բայաժամանակային վերջավորությունների (-այ, -աւ, -աւ, -այք, -ան, որոնք արդեն սեռային տարբերակման ցուցչի դեր էին կատարում) խախտում:

Այսպիսով, VII դ. հայերենն արդեն զգալիորեն հեռացել էր դասական հայերենից: Սեբեոսի լեզվի հոլովման ու խոնարհման առանձնահատկությունների քննությունը ցույց է տալիս, որ պատմիչի լեզուն ևս, դասական հայերենի հոլովման և խոնարհման համակարգերը հիմնականում ժառան-

²⁷ Վ. Թ. Չ ա լ ը խ յ ա ն, Քերականություն հայկազյան լեզվի, Վիեննա, 1885, էջ 67, ուր տողատակի ծանոթության մեջ ե խոնարհման բայերի անցյալ անկատարի եզակի երրորդ դեմքի մասին կարդում ենք. «Կատնվի գործիւր ալ, ինչպես նաև հաաանիւր, տեսանիւր և այլն, բայց ընտիր չէ» (ընդգծումները հեղինակինն են—Գ. Բ.):

գեղով ու պահպանելով հանդերձ, զերծ չէ խոսակցական, ինչպես նաև բարբառային լեզվի ազդեցությունից, ձիշտ է. ներկայացված տարբերությունները դեռ կիրառման այն հաճախականությունը չունեն, որպեսզի կանոնարկված ձևերի բազմության մեջ անմիջապես աչքի ընկնեն և դեռ համակարգ չեն կազմում, սակայն եղած փաստերն էլ բավական են ասելու, որ Սերեոսն արդեն զգալիորեն հեռանում է դասական մատենագիրների լեզվական արտահայտության եղանակներից, դաստիարակ հայերենի որոշ նորմերից:

ОСОБЕННОСТИ СКЛОНЕНИЯ И СПРЯЖЕНИЯ ЯЗЫКА «ИСТОРИИ» СЕБЕОСА

ГЕВОРГ БАГДИШЯН

Резюме

Исследования особенностей склонений и спряжений языка Себеоса показывают, что язык историка, сохранив в основном системы склонений и спряжений классического армянского литературного языка, был подвержен также влиянию разговорного языка и его диалектов. При этом следует отметить, что глагольное спряжение, по сравнению со склонением, в большей степени сохранило черты классического армянского языка.

Однако Себеос в значительной степени отошел от выражений, языковых приемов и норм классического армянского языка.